

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան դինը 10 բուրջի կէս տարվանը 6 բուրջի Առանձին համարները 5 կոպէկով:

Քիֆիսում գրվում են խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առուօտան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Բ Գ Ի Բ Գ Ի Բ Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

«ՄՇԱԿ» ԼՐԱԳԻՐԸ

Մայիսի 1-ից մինչև տարվայ վերջը կարճեցայ 500 ընթացիկ:

Դիմել Тифлисъ, редакция «Мшакъ».

Այն անձինք, որոնք վճարել են մինչև մայիսի 1-ը և ցանկանում են շարունակել լրագիր ստանալը, թող հոգ տանեն վաղորօք յայտնելու այդ մասին խմբագրութեանը, որպէս զի լրագրի առաքումը չընդհատվի:

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում:

ԲՈՎԱՆԻ ԿՈՒՅՈՒՄԻՏԵ

Հարաւային Մանջուրիայում.—Ներքին Տեսչարարութիւն. Մամուլ. Նամակ Մեղրից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շարքը. Հէնրի Ստէյնլի Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Թուրքիկ ապստամբութիւններ:

ՀԱՐԱՆԱՅԻՆ ՄԱՆՋՈՒՐԻԱՅՈՒՄ

Մեր մեր տեսութիւնները մէկուսուսել էինք, որ եւրօպական մամուլը հետաքրքրված էր այն հարցով, թէ ո՞ր է դանվում եսպանական գորապետ Օկուիը գործով: Այժմ պարզվեց, որ Լաօղունեան թերակղզում Բիցզիլօի ծովափի վրա իջած գործը Օկուի գործն է:

Անկասկած, ասում է «Рус. Вѣд.» թերթը, Օկուի գործի ծովափ իջնելու ծրագիրը նախատեսված էր վաղորօք եսպանական շարքի կողմից և այդ մասին յայտնված էր Կուրօկիին, բայց իրագործվեց այն ժամանակ, երբ գէներալ Կուրօկիին աջակցեց անցնել Եսպանիա:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԹՈՒՆՅՈՒՆ ԳՊԵՆՏԻՆՆԵՐ

Թէև առավել նամակում խոստացել էի այս երկրորդ նամակում զբաղվել հայերով և նրանց կենսով, սակայն մի յարմար առիթով հայերէ այցելած լինելով, ցանկանում եմ այս անգամ այդ քաղաքի մասին գրել, հայերի մասին գրելը յաղթող անգամայ թողնելով:

Կահիրէ Եգիպտոսի մայրաքաղաքն է համարվում, բոլոր մեծ պաշտօնատեղերը այնտեղ են գտնվում, ինչպէս նաև Պալատ, անգլիական կառավարութեան ներկայացուցիչ յօրը Կրօմլէ, թիւրքաց կառավարութեան բարձր կօմիսէր գազի Անմէր Մուստաֆ փաշան, օտար տէրութիւնների քաղաքական ներկայացուցիչները, և այլն:

Կահիրէն Աղէքսանդրիայից եռապատիկ աւելի ընդարձակ է, ունի մօտաւորապէս 800,000 բնակիչ, մինչդեռ Աղէքսանդրիայի բնակիչները թիւն է 300,000, թէև օտարականները աւելի բազմաթիւ են, քան թէ Կահիրէում:

Կահիրէի փողոցները Աղէքսանդրիայի փողոցների հրապուրելու չունեն. ամառվայ խիստ շոգերի պատճառով փողոցները սալապատակված չեն, այլ մանր քարերի կտորներով և հողով ծածկված են, որովհետև արքաները մեծ մասամբ ոտաբերիկ ման գալով, չեն կարող արեղակի կիլիչ ճառագայթների տակ տաքացած սալապատակների, ցեմէնտի կամ ասֆալտի վրա կոխել: Անձրևային եղանակին և կամ արհեստական ջրիւր հետևանքով (օրական

ցում: Մինչև այժմ ցամաքի պատերազմը առաջ էր տարվել Կորէան ձեռք գցելու նպատակով և Պորտ-Արտուրի մօտ եղած առաջին ծովային պատերազմը առել էր Եսպանիայի ձեռքը գերիշխանութիւն ծովի վրա: Մանջուրիայի վերաբերութեամբ հանգամանքները ուրիշ էին: Ռուսները չէին կարող մայ Մանջուրիան առանց մարտման, թէև շատ յարմար կը լինէր սկզբում յետ նահանջել դէպի Մարբին և յետոյ ռուսական մեծաքանակ զօրքերով ապահով կերպով առաջ ընթանալ դէպի Մանջուրիա և Կորէա: Թէև սկզբում յետ նահանջելով ռուսաց զօրքերը կորուստ պահպանված կը լինէր, իսկ միւս կողմից եսպանացիները չափազանց հեռացած կը լինէին իրանց յենակէտները և ուրեմն ճակատագրական վտանգների ենթարկված, այնուամենայնիւ կան հիմնաւոր պատճառներ այդ քայլը չանելու համար:

Իրերի գրութիւնը թերազրում է ռուսներին միայ Հարաւային Մանջուրիայում և ստիպում է մղել լուրջ պաշտպանողական մարտում աննպաստ պայմանների մէջ, չը սպասելով ծրագրած օժանդակ ոյժերին: Գլխաւոր պատճառը, թէ ինչու ռուսները չեն կարող նոյն իսկ ժամանակաւոր կերպով թողնել Հարաւային Մանջուրիան, այն է, որ ռուսաց նաւատորմը բեկուցված է Պորտ-Արտուրին և չէ կարող հեռանալ Դոնիկ Մովից, որովհետև պարզված է երկպառակ աւելի ուժեղ եսպանական նաւատորմով: Իսկ ռուսաց Պորտ-Արտուրեան նաւատորմի վիճակի հետ անբաժան է և ներկայ տարվայ ծովային պատերազմի ելքը: Ռուսները կարող են յոյս ունենալ աջողութեան վրա միայն այն ժամանակ, երբ Մաղաղ պիկիանոսի ներկայ նաւատորմի գլխաւոր ոյժերը անգնաս կը մնան և հարաւորութիւն կունենան միանալ այն նաւատորմի հետ, որ պէտք է գնայ Բալտիկեան ծովից ծովապետ Բօթրեպուլիսկուսը դեկավարութեամբ:

Այդ նկատուամբերով առաջարկելով 4—5 անգամ ջրում են փողոցները) փողոցները ցիլոտում են և անցուղարձը անտանելի է դառնում:

Կահիրէ Եգիպտոսի ձմեռանոցն է, ինչպէս Աղէքսանդրիա ամառանոցն էր. հետևաբար կենսը Կահիրէում աւելի թուր և աւելի հրապուրելի է ձմեռը, քան թէ ամառը: Եւրօպացի հարուստներ և տուրիստներ ձմեռելու 3—4 ամիսները Կահիրէի հօտէլներում են անցնում. Կահիրէի հօտէլները խկապէս հողակալ և փառաւոր շէնքեր են, որոնց նմանը Աղէքսանդրիա չունի և Եւրօպայի մէջ էլ շատ քիչ են գտնվում այդպիսի հսկայ հօտէլներ:

Կահիրէում նշանաւոր սեղ է ընունում նոյնպէս հասարակաց պարտէզը իր փողոցի թատրոնական շէնքով, հասարակածի յատուկ բոյսերով և արհեստական ծաղիկից շինված բերրով. մինչդեռ Աղէքսանդրիա գուրկ է մի այդպիսի ընդարձակ պարտէզից, թէև ունի շատ փոքրիկ մի պարտէզ, աւելի երեխաների համար: Կահիրէ ունի ընդարձակ մի հրապարակ Եգիպտոսի նուաճող առաջին խիղի Մուհամմէդ Ալի փաշայի բրօնզեայ ձիաւոր արձանով, սակայն աւելի հրապուրելի է աւելի շքեղ և Աղէքսանդրիայի Մէն շիչի հրապարակը, նոյնպէս մի և նոյն արձանով:

Կահիրէ Աղէքսանդրիայից աւելի ման գալու հաճոյատեսիլ և սիրուն վայրեր ունի. մանաւանդ Կահիրէի շատ մօտ են նշանաւոր պատմական վայրերը, ինչպէս պիլոսոփները, սֆինքսը, Ռամէս III-ի արձանը, Կորօնադը և այլն:

Կահիրէում կենսը Աղէքսանդրիայից կրկնապատիկ աւելի թանգ է: Նոյն կարգ ու կանօնը տիրում է Կահիրէում, ինչ որ ստել ենք Աղէքսանդրիայի համար: Եւր-

«Рус. Вѣд.» թերթը կարծում է, որ գէներալ Կուրօպուկին, հարաւորութիւնը ներածին պէս, կը շարժվի դէպի Պորտ-Արտուրի կողմերը՝ այնտեղի գործը փրկելու համար: Չը պէտք է աչքաթող անել և այն, որ եթէ ռուսները ներկայումս թողնեն Հարաւային Մանջուրիան մինչև աշուն, այն ժամանակ եսպանացիների ձեռքը կընկնէր մանջուրական երկաթուղին, որ մի քանի հարիւր միլիոնների ծախքեր է խլել դանձարանից: Իսկ երկաթուղու խանգարումը կը դժուարացնէ ապագայում ռուսաց յարձակողական զործողութիւնները: Հարաւային Մանջուրիայից հեռանալը կարող է առաջ բերել և աննպաստ քաղաքական հետևանքներ, օրինակ Չինաստանը կարող է նրան գրաւել, որպէս զի իր հետ միացնէ մանջուրական հարստութեան այդ սրբազան երկրին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Ժողովրդական կամ էժանագին հրատարակութիւնների մասին մենք այդքան յայտնել ենք մեր կարծիքը: Էժանագին պէտք է գրբըր առնատարակ և ոչ թէ էժանութեան համար հրատարակել փողոցի, վտիտ գրբոյններ: Նոյն միտքն է յայտնում և «Բազմակէս» ամսագիրը: Ամենայն իրաւունքով ամսագիրը պահանջում է, որ Եւրօպայի հայերն էլ մտածեն էժանագին, հանրամատչելի գրականութեան մասին:

Արտասանման մէջ—ասում է ամսագիրը—եթէ երբէք հաստատվի մեր դժած փափագներով կազմակերպված ամսագին հրատարակչական մը, ապահով կը կարծենք անոր յաջողութիւնը: Հրատարակութիւններ պէտք է սկսել ժողովրդական պաշտելի բանաստեղծներու, վիպասաններու երկերէն: Տարտղեւած ստուարթիկ հայ աղբատ գաղթականութիւնը եթէ ունենայ մէկ Փրանքոյց «Կայծեր» մը «Մամուլ» միասին, ամառը ամառը պիտի գիտնայ յարգել մեծ վիպասանին յիշատակը...

Ինքը չափազանց համակրելի է, բայց «Կայծեր» ու «Մամուլ» մի Փրանքով տար

կաթուղին Կահիրէին է կցում շրջակայ օդատուն և սիրուն գիւղերը, ինչպէս Ձէթուն, Մաթարիա, Հավան և այլն, որոնք ամառանոցներ են դառնում միջակ հարուստների համար, որոնց կարողութիւնն է ներում ամառանոցները Եւրօպա օդափութիւններ քնար, նոյն դասակարգի մարդիկ, մանաւանդ մանուկների ընտանիքները, ինչպէս նաև երեմն խղիլը և իր ընտանիքը ամառները Աղէքսանդրիա են գալիս և բնակվում են Ռամէլի ամառանոցները, որոնք քաղաքին միացած են էլէկտրական տրամվայի գծով. տրամվայը կէս ժամում հասնում է քաղաք:

Կահիրէում նոյնպէս էլէկտրական տրամվայները ամբողջ քաղաքը կտրում անցնում են 5 կօպէկով: Հակառակ տրամվայների այսքան էժան և բազմաձիւղ լինելուն, 3000-ից աւելի կառքեր շարունակ երթնակում են փողոցներում. սովորական այցելութիւնների համար կառքերը ստանում են 40—50 կօպէկ, մինչդեռ Աղէքսանդրիայում 15—25 կօպէկ:

Կահիրէի օդը աւելի չոր, աւելի թեթեւ և աւելի առողջաւէտ է Աղէքսանդրիայի օդից, միայն ամառվայ մէջ ապրիլ և մայիս ամիսներում մեծ անապատից փչող տաք քամիների (սամ ելիլ) պատճառով մի քիչ անտանելի է դառնում. սակայն զարմանքով պէտք է յիշել, որ այսքան շոգ մի կլիմայի տակ երբէք չէ պատահել ոչ ընկերներից և ոչ էլ օտարականներից, որ արևահար լինեն, մինչդեռ արևահարութեան դէպքեր աւելի յաճախակի են լինում բարեխանս կլիմաներում, ինչպէս Եւրօպայում և Ամերիկայում:

Առնատարակ Եգիպտոսում, մամուլի, խօսքի և հաւաքութիւնների կատարելապատութիւն կայ: Տղազրական և մամուլի հակողութիւն չը

մի մեծագործութիւն կը լինի, որին ընդունակ է գուցէ միայն անգլիական ազգը: Մինչև այժմ կողկասի հայերը, որոնք անհամեմատ մեծ ընթերցող հասարակութիւն ունեն, չեն կարողացել երկու Փրանկանց «Վէբը Հայաստանի» տար: Պէտք է, սակայն, խոստովանել, որ այս հանգամանքը աւելի մեր անկարողութեան մասին է խօսում, քան պահանջ չը լինելու մասին:

«Մուրճ» ամսագրի վերջին համարում պ. Լ. Ս. այսպէս է ընդորոշում հանգուցալ Արգար Յովհաննիսեանի գրական գործունէութիւնը:

Գրական ապարիզում էլ, չը նայած որ սեփական օրգաններ ունէր, հանդիսանում էր աւելի իբրև հրատարակիչ, մեկենաս, դեկավար, ներշնչող, քան գրող և սեփական գրքով որդ գաղափարների համար մարտնչչող: Գրական ապարիզում նա իր գործունէութիւնը սկսեց հիմնելով 1876 թուականին «Փորձ» եռամսեայ հանդէսը, որ յետոյ դարձրեց ամսագիր: «Փորձը» կարելի է աւելի գրական ժողովածու համարել, քան ընթացիկ կենսին հետևող մի օրգան: Եթէ համեմատեք նրան իր նախորդների—«Հիւսիսափայլի» կամ «Կոունկի» հետ, անշուշտ աւելի հարուստ գրական-պատմական նիւթեր կը գտնէք, սակայն չէք հանդիպի ոչ նազարեանցի և ոչ Աղաբէկեանի ոգևորված, համոզված քարոզներին, չէք գտնի հրապարակասուտութիւն: «Փորձը» մէջ բացակայում է ինքը խմբագիր Արգար Յովհաննիսեանը իբրև հրապարակասու: Նա «Փորձը» հրատարակիչ էր, բայց ոչ խմբագրող: Իբրև հրատարակիչ չուղեմալով դիմանալ դեֆիցիտներին—դաւարեցրեց իր հանդէսը, որի փոխարէն հիմնեց «Արձագանք» շաբաթաթերթը: «Արձագանքը» մէջ աւելի արտայայտվեց Արգար Յովհաննիսեանի գրական-հասարակական անհատականութիւնը. «Փորձում» կարծիք թելի նման անցնում էր քաղաքահայրական տեսիցները, որ «Արձագանքի» մէջ աւելի նացիոնալիստական արտայայտութիւն ստացաւ և միացաւ Հայաստանային եկեղեցու մէջ կողբական գերիշխանութեան պատուաստելու ձգտման հետ. նա չէր բաշխում ծաղիկու ժողովրդական սկզբունքները, դիմօղբատակայն արտայայտութիւնները: Եւ ահա «Արձագանքի» Արգար Յովհաննիսեանը իր համոզմունքներով վերջի վերջոյ մտեցաւ մեղուական աշխարհայեցողութեան, որի հեղինակաւոր ներկայա-

կայ, ամեն որ ազատ է առանց արտօնութեան հրատարակել որ և է թերթ կամ գիրք, նոյնպէս զբաղնութիւն էլ չը կայ:

Երկրում երկու տեսակ դատարաններ կան—տեղական և խառն դատարաններ: Առաջիններում տեսնում են ընկերներ և թիւրքախառտակները դատերը, որոնց մէջ արգարութիւնը յաճախ ոտնատակ է լինում կաշառքի և խաթիբ համար. իսկ խառն դատարաններում դատարանները ընտրվում են օտար տէրութիւնների ներկայացուցիչներից՝ օտարահպատակների դատերը տեսնելու համար, որտեղ արգարութիւնը և իրիզը անկաշառքի է:

Եգիպտոսի հարստութեան միակ աղբիւրը Նեղոս գետն է. մասնաւոր մի ընկերութիւն ավերի երկարութեանը մասնաւոր ընդունաբաններ շինել է, ջրի նուազութեան պարագային նրանցից բաց թողած ջրով ոռոգելու համար շրջակայ արտերը շատ չնչին մի վարձ ստանալով: Այս ոռոգման հետևանքով ամայի հողերը մշակելի են դարձած և իրանց արժէքները տասնապատկած: մինչև իմարթում և աւելի հեռուները երկարող երկաթուղիի գիծն էլ փոխարութեան գիւրութիւններ ընծայելով, երկրի հարստութեան երկրորդ աղբիւր է դարձած: Արհեստական ոռոգման օժանդակութեան շնորհիւ մի և նոյն հողից սարեկան 3—4 անգամ մշակման արդիւնքն են քաղում. ի հարկէ այդ բանին գլխաւորաբար նպաստում է նաև տաք կլիման:

Եգիպտոսի կլիման օտարականներին ընդհանուր թուրութիւն է պատճառում և տրամադրութիւնը փչացնում:

Դոկտ. Կ. Փաշայեան
Աղէքսանդրիա, մարտի 17

